

ՇԵՔՍԲԻՐ. ՀԱՄԼԵՏ

Թարգմ. Գարեգին Խ. Բաբազյան. Վիեննա, 1899,

Մխիթարյան տպարան

Թարգմանությունը ապակու տակ դրած մի վարդ է. գրեթե անկարելի է, որ թարգմանիչը տա բնագրի հարազատ բույրն ու հրապույրը: Սակայն միշտ պահանջելի է, որ նա հավատարիմ մնա գործի մտքին և հասկանալի տա ընթերցողին: Այս պահանջը մեծանում է մանավանդ, երբ թարգմանվում է այնպիսի մի երկ, որի ամեն մի խոսքն ու նախադասությունը, չափած ու կշռած, ունեն իրանց խոր նշանակությունն ու հաստատ տեղը: Այսօրինակ գործերից է Շեքսպիրի Համլետը, որ անգլերենից թարգմանել է պ. Բաբազյան: Այս Համլետի երրորդ հայերեն թարգմանությունն է: 1889 թվին Թիֆլիսում հրատարակվեց պ. Ս. Արծրունու թարգմանությունը: 1894 թվին Թիֆլիսում հրատարակվեց Համլետի երկրորդ՝ Հովհաննես Խան-Մասեհյանի արած թարգմանությունը անգլերենից:

Վերջապես ահա երրորդը — պ. Բաբազյանի թարգմանությունը, նույնպես բնագրից, տպված Վիեննայում: Պ. Բաբազյան, որ՝ հավակնություն չունի խորհելու, թե իր թարգմանությունը թերություններե զերծ եղած լինի, հրատարակում է այն, քանզի պ. Ս. Արծրունու թարգմանությունը անչափ տարբեր է բնագրից, իսկ պ. Մասեհյանի թարգմանությունը **«որի վրա քննադատություններ եղան ազգային թերթերի մեջ, չի ներկայեր այն հանգամանքները, գոր այսպիսի կարևոր գործի մը թարգմանությունը կպահանջե»:**

Չզիտեմ, բացի թերությունները, որ թարգմանիչը խոստովանում է, թե իր գործն էլ կունենա, ուրիշ ինչ հանգամանքներ են, որ այսքան նվաստացնում են պ. Մասեհյանի թարգմանությունը, բայց ազգային թերթերի մեջ («Տարագ» 1896, № № 40, 41, 43, 44 և 45) այդ գործի մասին խոսողներից մեկն էլ ես եմ եղած և չեմ հավանում պ. Բաբազյանի այդ խոսքերը:

Ահա մենք սրտագին ողջունելով նրա աշխատությունը, համառոտ ցույց կտանք նույն տեսակի թերություններ, ինչ որ ժամանակին նկատել ենք պ. Մասեհյանի թարգմանության մեջ: Եվ թող նա չկարծի, թե այս տեսակ նկատողություններով դիտավորություն ունենք հերքելու իր, ինչպես և իր նախորդի, գործի լրջությունն ու կարևորությունը:

Օրինակներ բերենք:

Համլետ Պոլոնիուսին ասում է.

— Այո՛, պարոն, **պարկեշտ լինել ինչպես աշխարհս կքալե**, կընշանակե տասն հազարեն մին ընտրել: 54:

Քերականորեն սխալ այս նախադասության միտքը միանգամայն հակասում է Համլետի հայացքներին և իսկույն մատնում է իրան:

Պ. Մասեհյան այսպես է թարգմանել.

— Ա՛յ, **լինել ազնիվ այսպիսի աշխարհում**, այդ է՝ լինել ընտրյալ տասն հազարներից:

Հանգուցյալ Ադամյանի դերի մեջ այսպես է եղել, — Այո՛, լինել ազնիվ մարդ, նշանակում է լինել ընտրյալ տասն հազարներից:

Բայց ջնջել է և իր ձեռքով գրել այսպես.

— Այո՛, **աշխարհիս այս ընթացքի** մեջ հազիվ կարելի է տասն հազար մարդոց մեջ մի ազնիվ մարդ գտնել:

Օֆելիան Համլետի հիշատակները վերադարձնելով ասում է.

«...Անոնք իրենց անույշ բույրը կորուսին, ետ առեք զանոնք, քանզի ազնիվ հոգվո մը համար՝ ճոխ նվերներն իրենց արժեքը կկորսնցնեն, երբ նվիրատուք **անբարեսեր** կդառնան»: 79—80:

Օֆելիայի բողոքն այն մասին չէ, թե Համլետ **անբարեսեր** է դարձել, այլ **անտարբեր**, ինչպես որ գործ է ածել և պ. Մասեհյան: Այսպես են տրամադրում և Օֆելիայի խոսքերը,

թե՛ մի ժամանակ, երբ ընծայեցիք «անոնց կընկերանային այնպիսի քաղցրաբույր խոսքեր, որ ավելի ևս ճոխ կընծայեին զանոնք»: Այդ քաղցրաբույր խոսքերը հիշեցնելով ու անտարբեր անվանելով, Օֆելիան ուզում է սիրո խոստովանություն, նորից քաղցրաբույր խոսքեր դուրս կորզել Համլետի բերանից, որ լսեն թաքնված թագավորն ու Պոլոնիոսը և ստուգեն, թե Համլետ անտարբեր է դեպի Օֆելիան թե չէ, սիրո կսկի՞ ծն է պատճառ, որով նա կտառապի, թե ուրիշ վտանգավոր մի պատճառ կա, որի կասկածն անհանգիստ է անում հանցավոր արքային:

Համլետը դերասանին ասում է.

— Ըսե՛ք, կխնդրեմ, այն հատվածը **արագությամբ**, ինչպես ես արտասանեցի, և այլն: 83:

Արագությամբը թարգմանիչը **սահուն** բառի տեղն է գործածել: Համլետ իր խոսքի շարունակության մեջ խրատ է կարդում դերասանական արվեստի մասին և ասում է. նույնիսկ կրքի հեղեղի ու փոթորկի ժամանակ պետք է **չափավորություն** պահել գործողությունը խոսքին հարմարեցնել, խոսքը գործողության: Նա չէր կարող այդպես հորդորել դերասանին:

Պ. Մասեհյան ասում է՝ **թեթև և ազատ**:

Кетчер. ասում է **плавно. Соколовский** — **легко и развязно.**

Հանգ<ուցյալ> Ադամյանի դերի մեջ ասված է — **հեշտությամբ և ազատ**:

Այս խոսակցության մեջ Համլետ հիշում է **Թերկամանդ և Հերոդ** (Հերովդես) անունները:

Պ. Բաբազյան ծանոթության մեջ ասում է — **հին ժամանակվան դերասաններ**:

Այնինչ Թերկամանդ սառակինոսների մի կուռք էր, որին վերագրում էին չար ու դաժան բնավորություն, իսկ Հերովդեսը, Հրեաստանի հայտնի Հերովդեսն է, որ Շեքսպիրի ժամանակները սովորաբար ներկայացնում էին միստերիաների մեջ:

Գոնգազոյի սպանությունը ներկայացնելիս դուրս է գալիս Լուչիանոս: Համլետ **բացատրում է.**

— Այս Լուչիանոս անուն մեկն է, եղբորորդի թագավորին:

Օֆել.— Դուք **խմբերգին** տեղը շատ լավ կըբռնեք, տեր իմ:

Համ. — Պիտի կարենայի **բացատրել**, ինչ որ ձեր և ձեր սիրահարին մեջ կդառնա, և այլն:
95:

Խոսքը **բացատրության** մասին է և իշխանը պարծենում է՝ իբրև լավ **բացատրող**: Բայց ինչ ունի այստեղ **խմբերգը**: Պ. Մասեհյանն էլ գործ է ածել **երգիչների մի ամբողջ խումբ**: Այս xop բառն է, որ ռուս թարգմանիչներն իրանց թարգմանությունների մեջ xop էլ թողել են: Xop — Շեքսպիրի ժամանակները կոչվում էր այն մարդը, այն դերասանը, որ խաղամիջոցներին դուրս էր գալիս պիեսի մութ տեղերը բացատրում, մեկնում և զբաղեցնում հասարակությանը: Մեր թարգմանիչները երևի այս xop-ը շփոթել են հունական xop-ի հետ և առաջ է եկել այսպիսի կոպիտ սխալ՝ **բացատրողի** փոխարեն դուրս է եկել **երգիչների խումբ**:

Համլետ, մոր հետ տեսակցության տեսարանի մեջ, վարագույրի հետևից սրով զարկում է Պոլոնիուսին և բացականչում.

— Մեռած, **տուլարի մը համար** մեռա՛ ճ. 108:

Համլետ ասում է, — «Մի դուկատ **գրավ կգամ**, որ սա մեռած է», ինչպես թարգմանել է պ. Մասեհյան: Հանգ<ուցյալ> Ադամյանն իր դերի մեջ իր ձեռքով գրել է **գրավ կդնեմ**, որ մեռավ, այդ մեռավ:

Թագավորը Համլետին հայտնում է, որ պատրաստվի Անգլիա երթալու: Համլետ այդ խոսակցության մեջ ասում է.

— Մնաս բարյավ, սիրելի **մայր** իմ:

Թագ.— Եվ **հայրդ**, որ կըսիրե քեզի, Համլետ:

Համ.— Իմ մայրս. հայր և մայր՝ այր և կին է. այր և կին մի մարմին է. այսպես ուրեմն մայր իմ: Օ՛ն յԱնգղիա: 125:

Այս տողերը կարդացողը կարող է կարծել, թե Համլետ մնաս բարյավ է ասում **մորը**, այնինչ մայրը իսկի չկա այդ տեսարանում: Պ. Մասեհյան պարզ է դուրս բերել.

Համլետն ասում է. ...Մնաս բարև սիրելի մայր իմ:

Թագ.— Ես քո սիրող **հայրդ եմ**, Համլետ:

Համլ. — **Իմ մայրս...** Հայր և մայր այր և կին են. այր և կին՝ մի մարմին են. ուրեմն՝ **դուք մայրս եք:**

Համլետ՝ հորեղբայր հորն է մայր անվանում, որ «**Անչափ խանդաղատելով նրա մասնավոր ապահովության համար...** շուտափույթ դրկում է Անգլիա»:

Խելագարված Օֆելիան երգում է.

Քանզի րոպին, սիրուն թռչուն,

Է իմ միակ ուրախություն:

Ըոպին ծանոթության մեջ բացատրում է — «**Կարմրալանջ թռչուն մը**»: 137:

Այս մի հին սիրային երգի կտոր է: Պ. Մասեհյան այդ տողերն այսպես է թարգմանել.

«Իմ սիրական անույշ Ռուբենն

Է իմ միակ ուրախություն»:

Գերեզմանափորը Համլետի հետ սրախոսում ու բռնախաղություններ է անում: Համլետ բացականչում է. «Անպիտանն որչափ **բացարձակ** է իր պատասխաններուն մեջ...»:

Տեղին անհարմար և միանգամայն հակասող մի բառ: Ընդհակառակը, Համլետ ուզում է ցույց տալ, որ նա **իսկի բացարձակ չէ** իր պատասխանների մեջ, և խոսքն այսպես է շարունակում.

«Քարտես ի ձեռին խոսելու է հետը, եթե ոչ ամենափոքր երկդիմի բառ մը պիտի մատնե մեզի: Արդարև, Հորեշիո, երեք տարիներե ի վեր կըղիտեմ, թե դարս շատ բծախնդիր եղած է...» 157:

Բացարձակ բառի տեղ Кетчер և Каншин գործ են ածում придирчив. Մասեհյան թարգմանել է.

«Ինչպես նրբամիտ է թշվառականը, պետք է սրա հետ կողմնացույցով խոսել...»:

Կարճ կտրելով այս նկատողությունները, այժմ ցույց տանք բաց թողած կտորները: Այդ կտորները ես կարտագրեմ Մասեհյանի թարգմանությունից:

Օֆելիան Համլետի ընծաները վերադարձնելով ասում է. — «Դուք ինձ հավատացնում էիք, թե սիրում եք ինձ»:

Համլ.— Իսկ դու չըպիտի հավատայիր ինձ, որովհետև, առաքինությունը չէ կարող այնպես պատվաստվել մեր փտած ծառաբունի վրա, որ մի համ մնացած չլինի մեր քիմքում: Ես քեզ չէի սիրում:

Օֆել.— Ուրեմն ես ավելի խաբված եմ եղել:

Խելագարված Օֆելիան պալատում երգում է.

Օֆելիա

Վկա երկինք և սուրբ Կատրին,
Ավա՛ղ, ամոթ բան է.
Ինչ մարդ լինեք, այդպես կանեք.
Իրավ, դա ցած բան է.
Կույսն ասում է. ինձ խոսք տվիր
Ինձի քեզ հարս առնել:

Նա պատասխանում է.

Քեզ կառնեի, թե դու չէիր
Իմ անկողին մտել:

Թագավոր

Ո՞րքան ժամանակ է, որ սա այսպես է:

Հոր մահվան բոթն առած՝ Լաերտ գալիս է Դանիա և մոլեգնած ներս ընկնում պալատ, ապիրատ թագավորից իր հայրն է ուզում: Թագուհին մեջ է ընկնում խնդրելով — **հանդարտորեն**, սիրելի Լաերտս:

Լաերտ

Արյան այն կաթիլը, որ հանդարտ լինի, անունս կկնքի պոռնրկի որդի, դա հորս կանպատվե, և նույնիսկ այստեղ, առաքինի մորս անբիծ ճակատին կդրոջմե երկաթով բոզության սպին:

Այս կտորները չկան պ. Բաբազյանի թարգմանության մեջ: Պակաս տեղեր կան նույնպես և 16, 90 և 95 երեսներում, իսկ 33 երեսում Համլետի խոսքերը հայրն է ասում: Ապա այսպիսի նախադասություններ ունի:

...**խնդրեցի իրմե, որ մեզի հետ մանրամասն հսկե այս գիշեր. 2:**

Փոխանակ **արթուն** հսկե:

Թե գործն այս կետին պիտի հասնե՞ր... 15:

Փոխանակ ասելու — մի՞ թե գործն այս կետին պիտի հասնե՞ր:

«Տեր իմ, նա իր սիրով, բայց պատվաբեր ձևերով կհոգնեցներ զիս. 25:

Փոխանակ ասելու — նա իր սերը ինձ հայտնում էր պատվաբեր ձևերով:

Շատ խորթ են հնչում այս բացականությունները.

Հո՛ւա, Պերնարտո. 2.

Բո՛ւհ, Դու կանաչ աղջիկ. 25.

Հիլո, հո՛, հո՛, տեր իմ. 35.

Հո՛, Հորեշիո. 86 և այլն:

Գրքի սրբագրությունն այնքան անփույթ է կատարված, որ մարդ չի հավատում, թե

Մխիթարյան տպարանից է դուրս եկած, կարծես Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերության հրատարակություններից լինի: Այսպիսի տառասխալներ են պատահում.

Ռիտո, փոխանակ՝ **Ռիդո**, 66. **Նիրկանյան**, փոխանակ՝ **Հիրկանյան**,
կուզե, փոխանակ՝ **կուտե**. 124. **գաք**, փոխանակ՝ **գնաք**, դուրս, փոխանակ՝ **դարս**, 173:
Տառասխալներ, որ փոխում են ամբողջ նախադասության միտքը: